

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ՄԻՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ  
ԵՒ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ  
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

2016

Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր Կանոնագիրը մշակուեցաւ եւ, յետ քուէարկութեան, իր ամբողջութեան մէջ վաւերացուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ, որ գումարուեցաւ 11, 12 եւ 13 Դեկտեմբեր 1974ին, Պէյրութի մէջ, Լիբանան:

Հ.Մ.Ը.Մ.ի մօտ վաթսունամեայ պատմութեան մէջ անկիւնադարձ կազմող այս ժողովին, ուր հիմը դրուեցաւ Միութեան համագաղութային կառոյցին, կը մասնակցէին Սփիւռքի զանազան շրջաններէն ընտրուած 23 իրաւասու պատգամաւորներ եւ խորհրդակցական ձայնով հրաւիրուած եղբայրներ, որոնք գոյացուցին Հ.Մ.Ը.Մ.ի Առաջին Գերագոյն Ժողովը:

Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր Կանոնագիրը ներշնչուած է Միութեան անգիր ոգիէն եւ ժողովրդավար սկզբունքներէն, որոնք կը կազմեն բարոյական ամրակոտ վէմը երիտասարդական գաղափարապաշտ մեր կազմակերպութեան:

Պէյրութ, 1974

- Առաջին բարեփոխում՝ 1979, Պտգմ. Բ. Ընդհ. Ժողով:
- Երկրորդ բարեփոխում՝ 1983, Պտգմ. Գ. Ընդհ. Ժողով:
- Երրորդ բարեփոխում՝ 1991, Պտգմ. Ե. Ընդհ. Ժողով:
- Չորրորդ բարեփոխում՝ 1999, Պտգմ. Է. Ընդհ. Ժողով:
- Հինգերորդ բարեփոխում՝ 2003, Պտգմ. Ը. Ընդհ. Ժողով:
- Վեցերորդ բարեփոխում՝ 2007, Պտգմ. Թ. Ընդհ. Ժողով:
- Եօթներորդ բարեփոխում՝ 2011, Պտգմ. Ժ. Ընդհ. Ժողով:
- Ութերորդ բարեփոխում՝ 2015, Պտգմ. ԺԱ. Ընդհ. Ժողով:

Չակերտներու մէջ գտնուող թիւերը Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի համապատասխան յօդուածներու թիւերն են, իսկ մութ տառերով գրուած յօդուածները՝ այս Շրջանի Ներքին Կանոնագրով յաւելուած յօդուածները:

# ԾՐԱԳԻՐ

## ԱՆՈՒՆ

Միութիւնս կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն՝ Հ.Մ.Ը.Մ. եւ սկառուտներ:

## ՆՊԱՏԱԿ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) նպատակն է՝

- ա. Պատրաստել ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ,
- բ. Սորվեցնել Միութեան անդամներուն ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր եւ հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,
- գ. Զարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատւութեան եւ պատուի զգացում, համերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,
- դ. Համակել անոնց միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով:

# ՄԻՋՈՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ը իր նպատակը կ'իրագործե՝

Ա. Սկսուտութեամբ,

Բ. Ընդհանուր մարմնակրթանքով եւ մարզախաղերով,

Գ. Դասախօսութիւններով եւ հրապարակային ձեռնարկներով,

Դ. Հրատարակութիւններով, հայոց լեզուի, պատմութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն նպաստող մշակութային ձեռնարկներով,

Ե. Ակումբներով եւ մարզարաններով:

Զ. Երիտասարդական Բաժանմունքով (18-30 տարեկան):

**ԿԱՆՈՆԱԳԻՐ**

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

**ՅՕԴ. 301 «1»** - Հ.Մ.Ը.Մ.ին կրնայ անդամակցիլ ամեն հայ անհատ, առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան, երբ կ'ընդունի **Միութեան Ծրագիր-Կանոնագիրը** եւ կ'ենթարկուի անոր կանոններուն եւ որոշումներուն:

**ՅՕԴ. 302 «2»**- Միութեան անդամակցելու տրամադիր անհատը պէտք է գրաւոր դիմում կատարէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը վարչութեան՝ ըստ իր շրջանի ներքին կանոնագրութեան:

18 տարեկանէն վեր դիմորդները պարտին ունենալ նուազագոյնը երկու տարուան անդամակցութիւն ունեցող երկու Հ.Մ.Ը.Մ.ականներու երաշխաւորութիւնը:

**ՅՕԴ. 303 «3»** - Թեկնածուն Հ.Մ.Ը.Մ.ի անդամ կը դառնայ մասնաճիւղի վարչութեան համաձայնութեամբ:

**ՅՕԴ. 304 «4»** - Իւրաքանչիւր անդամ կը կատարէ իր բարոյական եւ նիւթական պարտաւորութիւնները հանդէպ Միութեան:

**ՅՕԴ. 305 «5»** - Հ.Մ.Ը.Մ.ական մը չի կրնար մաս կազմել մարզական եւ սկաուտական այլ միութիւններու: Այլ խումբերու մասնակցութեան պարագան կը կարօտի Շրջանային Վարչութեան կամ Սեկուսի Շրջանի Վարչութեան հաւանութեան (ըստ շրջանի ներքին կանոնագրութեան):

**ՅՕԴ. 306 «6»** - Շրջանէ շրջան, կամ մասնաճիւղէ մասնաճիւղ փոխադրուող անդամ մը պարտի ներկայացնել իր միութենական փոխանցագիրը:

Ա. Մասնաճիւղէ մասնաճիւղ անդամի մը փոխանցումը կը կատարուի Մասնաճիւղի Վարչութեան արտօնութեամբ, եւ Շրջանային Վարչութեան վաւերացումով:

Բ. Շրջանէ շրջան անդամի մը փոխանցումը կը կատարուի Մասնաճիւղի Վարչութեան արտօնութեամբ, Շրջանային Վարչութեան վաւերացումով, եւ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

**ՅՕԴ. 307 «7»** - Անդամ մը չի կրնար միաժամանակ մաս կազմել ստորադաս եւ գերադաս մարմիններու կամ յանձնախումբերու:

# ԴՐՕՇԱԿՆԵՐ

**ՅՕԴ. 308 «8»** - Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակն է՝



*տողանցքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.*

*տողանցքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.*

Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 309 «9»** - Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան դրօշակն է՝




*տողանցքներու՝ 120սմ.  
սրահային՝ 100 սմ.*

*տողանցքներու՝ 180սմ.  
սրահային՝ 150 սմ.*

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտության դրոշակը իւրաքանչիւր շրջանի կը տրամադրուի  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**Ծանօթ Ա.-** Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն ներս,  
բոլոր Մասնաճիւղերը կ'ունենան իրենց դրոշակները, նման  
Հ.Մ.Ը.Մ.ի դրոշակին, Հ.Մ.Ը.Մ.ի վահանէն վար կը գրուի  
Մասնաճիւղի անունը եւ հիմնադրութեան թուականը:



**Ծանօթ Բ.-** Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն ներս,  
Հ.Մ.Ը.Մ.ի դրոշակը, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտության դրոշակը եւ  
մասնաճիւղի դրոշակը կ'ըլլան վեց ոտքով չորս ոտք մեծութեամբ:

## ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՅՕԴ. 310 «10» -** Հ.Մ.Ը.Մ.ը ունի հետեւեալ ժողովները՝

- Ա. Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողով
- Բ. Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողով
- Գ. Շրջանային Ներկայացուցչական Ժողով
- Դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով:



**ՅՕԴ. 311** «11» - Վերոյիշեալ ժողովներէն համապատասխան կարգով կը բխին հետեւեալ մարմինները՝

- Ա. Մասնաճիւղի Վարչութիւն
- Բ. Մեկուսի Շրջանի Վարչութիւն
- Գ. Շրջանային Վարչութիւն
- Դ. Կեդրոնական Վարչութիւն:

**ՅՕԴ. 312** «12» - Ժողովներու եւ վարչութիւններու որոշումները կը տրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ: Բացառութիւն կը կազմեն Կանոնագրով նախատեսուած պարագաները (Տեսնել՝ Յօդուած **350** «39 Ա», **362** «50-ի Ծանօթը», **406** «72», **428** «92» եւ **475** «134»):

**ՅՕԴ. 313** «13» - Վարչութիւն մը լուծուած կը համարուի, եթէ իր նստաշրջանի ընթացքին կորսնցնէ իր կազմի մեծամասնութիւնը: Նման պարագայի՝ Վարչութիւնը պարտաւոր է հրաւիրել զինք ընտրող ժողովը՝ առ ի տնօրինութիւն:

## ՄԱՍՆԱՃԻԻՂ

**ՅՕԴ. 314** «14» - Նուագագոյնը 18 տարիքը բոլորած տասնհինգ անհատներ հաշուող խմբաւորում մը կրնայ կազմել Հ.Ս.Ը.Մ.ի մասնաճիւղ մը: Նորաստեղծ մասնաճիւղը օրինական կը նկատուի, երբ կը ստանայ Գերադաս Վարչութեան վաւերացումը:

**ՅՕԴ. 315** «15» - Իրաքանչիւր քաղաք կ'ունենայ միայն մէկ մասնաճիւղ: Անհրաժեշտութեան պարագային Շրջանային վարչութեան արտօնութեամբ կարելի է ստեղծել մէկէ աւելի մասնաճիւղեր:

## ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ՅՕԴ. 316**– Մասնաճիւղի մը մէջ միանման աշխատանք տանողներու համախմբումը կը կազմէ բաժանմունք:

**ՅՕԴ. 317**– Մասնաճիւղ մը սկաւուտական կամ մարզական բաժանմունքներու կողքին կրնայ ունենալ նաեւ այլ օժանդակ բաժանմունքներ, որոնք կը տանին ընկերային, յարաբերական, տնտեսական, կազմակերպչական եւ դաստիարակչական աշխատանքներ:

Ծանօթ.- Բաժանմունքի մը անդամները կրնան բաժնուիլ խումբերու:

ՅՕԴ. 318 - Անդամ մը կրնայ մասնակցիլ իր մասնաճիւղի զանազան բաժանմունքներուն եւ խումբերուն:

ՅՕԴ. 319 – Մասնաճիւղի Վարչութիւնը կը նշանակէ բաժանմունքի Վարիչ Մարմինը, որ կը ղեկավարէ բաժանմունքի աշխատանքները: Բաժանմունքի Վարիչ Մարմնի ժողովներուն իրաւասու ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցի Վարչութեան ներկայացուցիչ անդամը:

ՅՕԴ. 320 - Բաժանմունքը կ'ունենայ հերթական Ընդհանուր ժողովներ:

## ԺՈՂՈՎՆԵՐ

### ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 321 - Բաժանմունքի Ընդհանուր Ժողովներուն կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասներութ տարիքը բոլորած բաժանմունքի բոլոր անդամները:

ՅՕԴ. 322 - Բաժանմունքի Ընդհանուր Ժողովին կը մասնակցի Մասնաճիւղի Վարչութեան ներկայացուցիչը:

ՅՕԴ. 323 - Բաժանմունքի Ընդհանուր Ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ ժողովին ներկայ անդամներուն թիւը կը ներկայացնէ բաժանմունքին տասներութը տարեկանէն վեր անդամներուն մեծամասնութիւնը:

Ծանօթ Ա. Մեծամասնութիւն չգոյանալու պարագային, երկրորդ Ընդհանուր Ժողովին ներկաներու թիւը մեծամասնութիւն կը նկատուի:

Ծանօթ Բ. Մասնաճիւղի Վարչութիւնը կամ բաժանմունքի Վարիչ Մարմինը պարտաւոր է բոլոր անդամներուն տեղեկացնել Ընդհանուր առաջին եւ հաւանական երկրորդ ժողովի գումարման թուականները, ժողովի թուականէն առնուազն 10 օր առաջ:

ՅՕԴ. 324-Բաժանմունքի Ընդհանուր Ժողովը՝

Ա. կը լսէ ու կը գնահատէ բաժանմունքի Վարիչ Մարմնի բարոյական եւ

նիւթական գործունէութեան տեղեկագիրը:

Բ. Յառաջիկայ տարուայ գործունէութեան համար կը մշակէ ընդհանուր ուղեգիծ, կը վաւերացնէ նախահաշիւ, (Մասնաճիւղի նախահաշուի սահմաններէն ներս), կու տայ որոշումներ եւ կ'ընէ թելադրանքներ:

Գ. Կը քննէ եւ կը վճռահատէ մասնաճիւղի Վարչութեան, բաժանմունքի Վարիչ Սարմնի եւ կամ անդամներու կողմէ ներկայացուած հարցերը:

## ՄԱՍՆԱՃԻՒԴԻ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

**ՅՕԴ. 325** – Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը տուեալ մասնաճիւղի գերագոյն ժողովն է:

**ՅՕԴ. 326 «16»** - Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը (վարչութեան գործունէութեան քննարկում եւ ընտրութիւն) կը գումարուի տարին մէկ անգամ: Անհրաժեշտ առիթներով կարելի է Անդամական Ընդհանուր Ժողովներ գումարել:

**ՅՕԴ. 327 «17»** - Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովներուն իրաւասու ձայնով կրնան մասնակցիլ միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները:

**ՅՕԴ. 328 «18»** - Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ իրաւասու ձայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

Ծանօթ.- Մեծամասնութիւն չգոյնալու պարագային, Անդամական Ընդհանուր երկրորդ Ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները տեղեկ պահել Անդամական Ընդհանուր Ժողովի գումարումէն եւ անհրաժեշտ պարագային՝ յետաձգումէն:

**ՅՕԴ. 329 «19»** - Անդամական Ընդհանուր Ժողովը, որուն հաշուետու է մասնաճիւղին վարչութիւնը՝

- Ա. Կը գնահատէ Մասնաճիւղի Վարչութեան տեղեկագրով ներկայացուած բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:
- Բ. Կու տայ որոշումներ եւ կ'ընէ թելադրանքներ Մասնաճիւղի գործունէութեան շուրջ:

- Գ. Կ'ընտրել մասնաճիւղի վարչութիւն:
- Դ. Ի պահանջեալ հարկին կ'ընտրել կանոնագրի սահմանած թիւով ներկայացուցիչներ՝ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրել առաւելագոյնը 2 փոխ ներկայացուցիչներ առանձին քուէարկութեամբ:
- Ե. Կ'ընտրել հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբ:

**ՅՕԴ. 330** – Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովը ունի նաեւ հետեւեալ պարտականութիւնները

- Ա. Յառաջիկայ տարուայ գործունէութեան համար կը մշակէ ընդհանուր ուղեգիծ եւ կը վաւերացնէ նախահաշիւ:
- Բ. Կ'ընտրել 3 կամ 5 հոգիէ բաղկացած մասնաճիւղի Հաշուեքննիչ եւ Արխիւային Յանձնախումբեր:
- Գ. Կը քննէ եւ կը վճռահատէ Մասնաճիւղի Վարչութեան, Շրջանային Վարչութեան եւ կամ մասնաճիւղի անդամներու կողմէ ներկայացուած հարցերը:

## ՇՐՋԱՆ

**ՅՕԴ. 331 «20»** - Շրջան կը համարուի այն նահանգը կամ նահանգները, երկիրը կամ երկիրները, որոնք ունին առնուազն 3 մասնաճիւղեր, եւ որոնք միասնաբար կը հաշուեն նուազագոյնը 250 անդամ:

**ՅՕԴ. 332 «21»** - Շրջանը կը գործէ Ներքին Կանոնագրութեամբ:

**ՅՕԴ. 333 «22»** - Շրջանը կը ղեկավարուի Շրջանային Վարչութեամբ, ընտրուած Շրջանային Ներկայացուցչական Ժողովէն եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 334 «23»** - Այն շրջանը, ուր Շրջանային Վարչութիւն գոյութիւն չունի, կը կոչուի Մեկուսի Շրջան:

**ՅՕԴ. 335 «24»** - Մեկուսի Շրջանը կը ղեկավարուի Մեկուսի Շրջանի Վարչութեամբ, ընտրուած Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովէն եւ վաւերացուած՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ:

## ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ԱՆՊԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**ՅՕԴ. 336 «25»** - Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովը Մեկուսի Շրջանի մը գերագոյն ժողովն է, որ կը գումարուի մէկ կամ երկու տարին անգամ մը:

Ծանօթ 1. Մեկուսի Շրջանները, ժողովի թուականէն նուազագոյնը մէկ ամիս առաջ, պարտին նամակով տեղեակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

Ծանօթ 2. Մեկուսի շրջանը կը գումարէ յատուկ Անդամական Ժողով այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութենէն կը ստանայ Պատգամաւորական Ժողովի օրակարգը:

**ՅՕԴ. 337 «26»** - Մեկուսի Անդամական Ժողովը (վարչութեան գործունէութեան քննարկում եւ ընտրութիւն) կը գումարուի երկու տարին մէկ անգամ: Անհրաժեշտ առիթներով կարելի է Անդամական Ժողովներ գումարել:

**ՅՕԴ. 338 «27»** Մեկուսի Անդամական Ժողովներուն իրաւասու ձայնով կրնան մասնակցիլ Միութեան մէջ առնուազն վեց ամիս անդամակցութիւն ունեցող տասնութ տարիքը բոլորած եւ նիւթական պարտաւորութիւնները կատարած անխտիր բոլոր անդամները, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը եւ Վարչութեան ներկայացուցիչը:

**ՅՕԴ.339 «28»** - Մեկուսի Անդամական Ժողովները օրինաւոր կը նկատուին, երբ իրաւասու ձայնի իրաւունք ունեցող անդամներուն մեծամասնութիւնը ներկայ է:

Ծանօթ.- Մեծամասնութիւն չգոյանալու պարագային, երկրորդ ժողովին ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը նկատուի: Վարչութիւնը պարտաւոր է բոլոր անդամները նախապէս տեղեակ պահել Անդամական Ժողովի գումարումէն եւ անհրաժեշտ պարագային յետաձգումէն:

**ՅՕԴ. 340 «29»** - Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովը՝

Ա. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Վարչութեան գործունէութիւնը:

Բ. Կը ճշդէ յառաջիկայ շրջանի գործունէութեան ուղեգիծը:

Գ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկախ մնացած հարցերը:

Դ. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի Ներքին Կանոնագիրը:

Ե. Կը պատրաստէ Վարչութեան նախահաշիւը եւ կ'որոշէ անդամական ցենզը:

- Ձ. Կ'ընտրել Մեկուսի Վարչություն:
- Է. Ի պահանջեալ հարկին կ'ընտրել Կանոնագիրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրել առաւելագոյնը 1 փոխ պատգամաւոր առանձին քուէարկութեամբ:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

**ՅՕԴ. 341 «30»** - Շրջանային Ներկայացուցչական ժողովը շրջանի մը գերագոյն ժողովն է, որ կը գումարուի երկու տարին անգամ մը:

Ծանօթ 1. Շրջանները, ժողովի թուականէն նուագագոյնը մէկ ամիս առաջ, պարտին նամակով տեղեակ պահել Կեդրոնական Վարչութիւնը, նամակին կցելով ժողովին կապուած օրահարցերը:

Ծանօթ 2. Շրջանը կը գումարել յատուկ Շրջանային Ներկայացուցչական Ժողով, այն պարագային, երբ Կեդրոնական Վարչութենէն կը ստանայ Պատգամաւորական Ժողովի օրակարգը:

Ծանօթ 3. Շրջանային Ներկայացուցչական ժողովի մը, որուն քննելի օրակարգը ճշդուած է, չի կրնար ինքնիրեն իրաւունք տալ այլ օրակարգի մը քննութեան համար իր ժամանակը երկարաձգել:

**ՅՕԴ. 342 «31»** - Շրջանային Ներկայացուցչական Ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է մասնաճիւղերու պարզ մեծամասնութիւնը, եւ նաեւ ձայնի իրաւունք ունեցող ներկայացուցիչներու՝ պարզ մեծամասնութիւնը:

**ՅՕԴ. 343 «32»** - Շրջանային Ներկայացուցչական Ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին՝

- Ա. Մասնաճիւղերու ընտրուած ներկայացուցիչները:
- Բ. Մասնաճիւղերու վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ:
- Գ. Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը:
- Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:

**ՅՕԴ. 344 «33»** - Մասնաճիւղերու ընտրելի ներկայացուցիչներուն թիւը կը ճշդուի հետեւեալ ձեւով՝

- |    |                                       |                 |
|----|---------------------------------------|-----------------|
| Ա. | Մինչեւ 25 անդամ ունեցող մասնաճիւղ մը՝ | 1 ներկայացուցիչ |
| Բ. | 026-0050 անդամ ունեցողը՝              | 2 ներկայացուցիչ |

Գ.	051-0075 անդամ ունեցողը՝	3 ներկայացուցիչ
Դ.	076-0100 անդամ ունեցողը՝	4 ներկայացուցիչ
Ե.	101-0150 անդամ ունեցողը՝	5 ներկայացուցիչ
Զ.	151-0200 անդամ ունեցողը՝	6 ներկայացուցիչ
Է.	201-0500 անդամ ունեցողը՝	7 ներկայացուցիչ
Ը.	501-0800 անդամ ունեցողը՝	8 ներկայացուցիչ
Թ.	801-1200 անդամ ունեցողը՝	9 ներկայացուցիչ
Ճ.	1200էն ետք իւրաքանչիւր 500 անդամի՝	1 ներկայացուցիչ

**ՅՕԴ. 345 «34»** - Մասնաճիւղի մը, Շրջանային Ներկայացուցչական Ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է նիւթական պարտաւորութեան լրիւ կատարումով:

**ՅՕԴ. 346 «35»** - Շրջանային Ներկայացուցչական Ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

- Ա. Շրջանային Վարչութեան մնացեալ անդամները:
- Բ. Շրջանային Խորհուրդներէն եւ Շրջանային Յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:
- Գ. Շրջանային ընդհանուր խմբապետ/խմբապետուհին:
- Դ. Շրջանային խմբապետն ու խմբապետուհին:

**ՅՕԴ. 347 «36»** - Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ չորրորդ համեմատութեամբ: Հրաւիրեալներուն կէսը կ'ընտրուի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ եւ մնացեալ կէսը կը հրաւիրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 348 «37»** - Անհրաժեշտ պարագային, կրնայ արտակարգ Շրջանային Ժողով գումարուիլ Կեդրոնական Վարչութեան կամ Շրջանային Վարչութեան հրաւերով եւ կամ մասնաճիւղերու վարչութիւններու առաջարկով:

Ծանօթ. Վերջինի պարագային, երբ Վարչութիւն մը պատճառաբանուած ձեւով արտակարգ Շրջանային Ժողովի առաջարկ ներկայացնէ, Շրջանային Վարչութիւնը պարտաւոր է այս առաջարկը փոխանցել միւս մասնաճիւղերու վարչութիւններուն՝ առնելու համար անոնց կարծիքը: Երբ մասնաճիւղերու վարչութիւններու 2/3 համեմատութիւնը համաձայն գտնուի առաջարկին, Շրջանային Վարչութիւնը պարտի արտակարգ Շրջանային Ներկայացուցչական Ժողով գումարել:

**ՅՕԴ. 349 «38» - Շրջանային Ներկայացուցչական Ժողովը՝**

- Ա. Կը լսէ մասնաճիւղերու վարչութիւններու երկամեայ գործունէութեանց միացեալ եւ ամփոփ նիւթաբարոյական տեղեկագիրը:
- Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Շրջանային Վարչութեան գործունէութիւնը:
- Գ. Կը ճշդէ յառաջիկայ շրջանի գործունէութեան ուղեգիծը:
- Դ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանին մէջ առկախ մնացած հարցերը:
- Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ շրջանի Ներքին Կանոնագիրը:
- Զ. Կը պատրաստէ Շրջանային վարչութեան նախահաշիւը եւ կ'որոշէ մասնաճիւղերու ցէնը:
- Է. Կ'ընտրէ Շրջանային Վարչութիւն:
- Ը. Ի պահանջեալ հարկին՝ կ'ընտրէ Կանոնագիրի սահմանած թիւով պատգամաւորներ՝ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին համար, ինչպէս նաեւ կ'ընտրէ առաւելագոյնը 2 փոխ պատգամաւորներ առանձին քուէարկութեամբ:

**ՅՕԴ. 350 «39» - Ներքին Կանոնագրի վերաբերող յօդուածներու՝**

- Ա. Քուէարկութիւնը կը կատարուի իրաւասու ձայներուն՝ ներկաներուն ձայներու երկու երրորդ մեծամասնութեամբ:
- Բ. Բարեփոխութիւնները ի զօրու կը դառնան Կեդրոնական Վարչութեան վաւերացումէն ետք միայն:

**ՅՕԴ. 351 «40» - Շրջանային Ներկայացուցչական Ժողովը կրնայ հիմնական փոփոխութիւններ մտցնել Ներքին Կանոնագրին մէջ, պայմանով որ փոփոխութեան առաջարկները առնուազն մէկ ամիս առաջ յանձնուած ըլլան բոլոր մասնաճիւղերուն եւ Անդամական Ընդհանուր Ժողովներու քննութեան:**

**ՅՕԴ. 352 – Շրջանային Ներկայացուցչական Ժողովը ունի նաեւ հետեւալ պարտականութիւնները՝**

- Ա. Կը մշակէ եւ կը վաւերացնէ յառաջիկայ նստաշրջանի նախահաշիւը:
- Բ. Կ'ընտրէ 3 կամ 5 հոգիէ բաղկացած Շրջանային Հաշուեքննիչ եւ Արխիւային յանձնախումբեր:



## ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

**ՅՕԴ. 353 «41»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն ժողովն է: Անոր որոշումները պարտադիր են Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն: Կը գումարուի չորս տարին անգամ մը:

**ՅՕԴ. 354 «42»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին՝

- Ա. Շրջաններու ընտրուած պատգամաւորները (տեսնել **Յօդ. 357 «45»**),
- Բ. Մեկուսի շրջաններու ընտրուած պատգամաւորները (Տեսնել **Յօդ. 357 «45»**),
- Գ. Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ,
- Դ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը:

Ծանօթ - Մեկուսի Շրջան մը եթէ հարիւրէ նուազ անդամ ունի կ'ունենայ մէկ ներկայացուցիչ, որ կ'ընտրուի Անդամական Ընդհանուր Ժողովէն:

**ՅՕԴ. 355 «43»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին Խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

- Ա. Կեդրոնական Վարչութեան մնացեալ անդամները,
- Բ. Կեդրոնական Վարչութեան կողմէ քառամեայ շրջանի մը համար նշանակուած յանձնախումբերէն մէկական ներկայացուցիչ:

**ՅՕԴ. 356 «44»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով անդամներ, իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդ համեմատութեամբ: Հրաւիրեալները կը նշանակուին Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ հիմնուելով շրջաններէ եւ մեկուսի շրջաններէ ներկայացուած առաջարկներուն վրայ: Կեդրոնական Վարչութիւնը կրնայ խորհրդակցական ձայներու թիւին մէկ չորրորդը իր կողմէ նշանակել:

**ՅՕԴ. 357 «45»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցող պատգամաւորներու թիւը կը ճշդուի հետեւեալ ձեւով՝

Ա. 100 - 0250 անդամ՝	1 պատգամաւոր
Բ. 251 - 0500 անդամ	2 պատգամաւոր
Գ. 501 - 0750 անդամ	3 պատգամաւոր
Դ. 751 - 1000 անդամ	4 պատգամաւոր
Ե. Յաւելեալ իւրաքանչիւր հազար անդամի համար՝ մէկ պատգամաւոր:	

Վերջին 500 անդամեն աւելին կ'իյնայ հազարի իրաւունքին մէջ:

**ՅՕԴ. 358 «46»** - Շրջանի մը Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցութիւնը պայմանաւորուած է նիւթական պարտաւորութեան լրի կատարումով:

**ՅՕԴ. 359 «47»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կը մասնակցին՝

Ա. Շրջանները իրենց շրջանի պատգամաւորներով, որոնք պարտին ունենալ լիազօրագիրներ վաւերացուած զիրենք ընտրող ժողովին դիւանին կողմէ:

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութեան ներկայացուցիչը պարտի ունենալ լիազօրագիր, որ վաւերացուած ըլլայ համապատասխան վարչութեան դիւանին կողմէ:

**ՅՕԴ. 360 «48»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին պատգամաւոր կրնայ ընտրուիլ առնուազն տասը տարի անընդմէջ Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած անդամ մը:

**ՅՕԴ. 361 «49»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ ներկայ է Շրջաններու եւ իրաւասու ձայնով պատգամաւորներու պարզ մեծամասնութիւնը:

**ՅՕԴ. 362 «50»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը՝

Ա. Կը լսէ Շրջանային եւ Մեկուսի շրջաններու վարչութեանց քառամեայ գործունէութեանց ամփոփ տեղեկագրերը:

Բ. Կը քննէ եւ կը գնահատէ շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:

Գ. Կը ճշդէ Միութեան յառաջիկայ շրջանի ընդհանուր գործունէութեան ուղեգիծը:

Դ. Կը կազմէ Կեդրոնական Վարչութեան պիւտճէի նախահաշիւը եւ կը կատարէ շրջաններու ցենզի բաշխումը:

Ե. Ի պահանջեալ հարկին կը վերամշակէ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը:

Զ. Կը քննէ եւ կը լուծէ շրջանի մը մէջ առկախ մնացած հարցերը:

Է. Կ'ընտրէ Կեդրոնական Վարչութիւն:

Ծանօթ. Կանոնագրի վերաբերեալ յօդուածներու քուէարկութիւնը կը կատարուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 363 «51»** - Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը կրնայ հիմնական փոփոխութիւններ մտցնել Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրին մէջ, պայմանով, որ փոփոխութեան առաջարկները առնուազն չորս ամիս առաջ յանձնուած ըլլան

բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու Վարչութիւններուն եւ ժողովներու քննութեան՝ Կեդրոնական Վարչութեան միջոցով:

**ՅՕԴ. 364 «52»** - Բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով կրնայ գումարուիլ՝

Ա. Կեդրոնական Վարչութեան պահանջով,

Բ. Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու երկու երրորդի առաջարկով:

Ծանօթ.- Երկրորդ պարագային, Շրջանային կամ Մեկուսի Շրջանի Վարչութիւն մը, Պատգամաւորական Ընդհանուր Ժողով գումարելու իր հիմնաւոր-եալ առաջարկը վաւերացնել տալէ ետք Շրջանային Ներկայացուցչական կամ Մեկուսի Շրջանի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ, զայն կը փոխանցէ Կեդրոնական Վարչութեան, որ իր կարգին՝ այս առաջարկը իր նկատողութիւններով կը յղէ Շրջաններուն եւ Մեկուսի Շրջաններուն առնելու համար անոնց տեսակէտը այս մասին: Ունենալէ ետք բոլոր Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու երկու երրորդի գրաւոր հաւանութիւնը՝ բացառիկ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով գումարելու մասին, Կեդրոնական Վարչութիւնը կը հրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի:

## **ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ, ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ԵՒ ԱՐԽԻՒԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ**

### **ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ**

**ՅՕԴ. 365** - Բաժանմունքի Վարիչ Մարմինը կը բաղկանայ 3, 5, 7, կամ 9 անդամներէ:

**ՅՕԴ. 366** – Վարիչ Մարմինը իր ժողովներու վաւերացուած ատենագրութեանց պատճէնը կանոնաւորապէս կը ղրկէ Մասնաճիւղի Վարչութեան:

**ՅՕԴ. 367** – Մասնաճիւղի Վարչութեան պահանջով, բաժանմունքի Վարիչ Մարմինը մասնաճիւղի վարչութեան կը յղէ իր նիւթա-բարոյական տեղեկագիրը եւ բաժանմունքի գոյքերու ցանկը:

**ՅՕԴ. 368** - Վարիչ Մարմինը ենթակայ եւ համարատու է Մասնաճիւղի Վարչութեան, նաեւ համարատու է Բաժանմունքի Ընդհանուր Ժողովին:

**ՅՕԴ. 369** – Վարիչ Մարմինը Մասնաճիղի Վարչութենէն կը ստանայ ընթացիկ ծախսերու համար որոշ գումար մը, որը նուազելու պարագային կը նորոգուի Մասնաճիղի Վարչութեան կողմէ, իսկ ձեռնարկներէ ստացուած եկամուտը կը փոխանցէ Մասնաճիղի Վարչութեան նոյնութեամբ՝ ձեռնարկի աւարտին:

**ՅՕԴ. 370** - Բաժանմունքի հաշիւները կը քննուին մասնաճիղի Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 371** – Վարիչ Մարմնի անդամ կրնայ նշանակուիլ տասնութ տարիքը բոլորած այն Հ.Մ.Ը.Մ.ականը, որ առնուազն մէկ տարի անդամակցած է Միութեան:

**ՅՕԴ. 372** - Բաժանմունքի Վարիչ Մարմինը պէտք է ստանայ Մասնաճիղի Վարչութեան արտօնութիւնը, Մասնաճիղի սահմաններէն դուրս աշխատանք տանելու համար:

**ՅՕԴ. 373** - Բաժանմունքի Վարիչ Մարմնի անդամ մը, որ չի հետեւիր իր Մարմնի շխատանքներուն, Վարչութեան կողմէ կը փոխարինուի նոր անդամով:

**Ծանօթ:** Անդամ մը չի կրնար մէկէ աւելի բաժանմունքերու Վարիչ Մարմիններու մաս կազմել:

## ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՅՕԴ. 374** «53»- Իւրաքանչիւր Մասնաճիղ կ'ունենայ իր Մասնաճիղի Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կընտրուի Մասնաճիղի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ, մէկ տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 375** «54» - Մասնաճիղի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

**ՅՕԴ. 376** «55»- Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մասնաճիղի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Շրջանային Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՕԴ. 377**«56»- Մասնաճիղի Վարչութեան կազմը կը վաւերացուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 378 «57»-** Մասնաճիւղի Վարչութիւնը կը վարէ Մասնաճիւղի մը միութեանական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագրի տրամադրութեանց եւ Շրջանային Ներկայացուցչական ու Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր ժողովներու սահմանին մէջ:

**ՅՕԴ. 379 «58» -** Մասնաճիւղի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ յանձնախումբերու եւ ժողովներու գործունէութեանց:

**ՅՕԴ. 380 «59»-** Մասնաճիւղի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, գորս իր գործունէութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին, որուն առջեւ պատասխանատու է հաւաքաբար:

**ՅՕԴ. 381 «60»-** Մասնաճիւղի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Շրջանային Վարչութեան կը դրկէ՝

Ա. Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական Ընդհանուր Ժողովին ատենագրութիւնները:

Բ. Իր շրջանի ակարտին նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիր:

**ՅՕԴ. 382 «61»-** Մասնաճիւղի Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Մասնաճիւղի Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Շրջանային Վարչութեան՝ առ ի տնօրինում:

**ՅՕԴ. 383 «62»-** Մասնաճիւղի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, որ կը պատրաստուի ու կը տրամադրուի Շրջանային Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 384-** Վարչութեան պարտականութիւնն է՝

Ա. Իր ընտրութեան առաջին ամսուայ ընթացքին մշակել միամեայ գործունէութեան ծրագիր եւ գործադրել զայն իր նստաշրջանի ընթացքին:

Բ. Կանոնաւոր կերպով գումարել ժողովներ եւ անոնց ընթացքին քննել եւ վճռահատել մասնաճիւղի հարցերը:

Գ. Քննել եւ վաւերացնել նոր անդամներու դիմումնագրերը, սոյն կանոնագրի սահմաններուն մէջ, ինչպէս նաեւ իր անդամներու հրաժարականները եւ փոխանցագիրերը:

Դ. Գանձել անդամատուրքերը իր անդամներէն եւ հասութաբեր ձեռնարկներ կազմակերպել հոգալու համար մասնաճիւղի ծախսերը:

Ե. Իր տարեկան ցենզը Շրջանային Վարչութեան ուղարկել Շրջանային Վարչութեան կողմէ նշանակուած ժամկետներուն:

- Զ. Նշանակել իր կազմին ներկայացուցիչներ՝ բաժանմունքներու Վարիչ Մարմիններու ժողովներուն իբրև կապ:
- Է. Նշանակել Մասնաճիւղի Սկստուտական Խորհուրդ, որ կը գործէ Վարչութեան նստաշրջանի տեւողութեան:
- Ը. Նշանակել մասնաճիւղի խմբապետ կամ մասնաճիւղի խմբապետուհի, որ Շրջանային Վարչութեան հաստատումը ստանալէ ետք, կը գործէ Վարչութեան նստաշրջանի տեւողութեան:
- Թ. Նշանակել բաժանմունքներու Վարիչ Մարմինները եւ հսկել անոնց գործունէութեան վարչական ներկայացուցիչներու միջոցաւ:
- Ժ. Վարչութեան մէկ տարուան գործունէութեան շրջանի աւարտին հրաւիրել Անդամական Ընդհանուր Ժողով:

ՅՕԴ. 385- Մասնաճիւղի Վարչութիւնը Շրջանային Վարչութեան կ'ուղարկէ Անդամական Ընդհանուր Ժողովին վաւերացուած նիւթա-բարոյական տեղեկագրէն օրինակ մը, արխիւային եւ հաշուեքննիչ յանձնախումբերու զեկոյցներու պատճէնը ինչպէս նաեւ նախորդ Անդամական Ընդհանուր Ժողովին բխած առաջարկներու գործադրման պատկերը եւ Մասնաճիւղի գոյքերու ցանկը:

ՅՕԴ. 386 - Վարչութիւնը համարատու է Մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողովին եւ Շրջանային Վարչութեան:

ՅՕԴ. 387 - Վարչութիւնները պատասխանատու են Շրջանային Վարչութեան որոշումներուն եւ հրահանգներուն լրիւ գործադրութեան:

ՅՕԴ. 388 - Վարչութիւնները Շրջանային Վարչութեան հրահանգներուն դէմ պատճառաբանեալ առարկութիւններ կրնան ընել: Շրջանային Վարչութեան հրահանգին կրկնութիւնը կը դառնայ պարտաւորիչ Վարչութեան համար:

ՅՕԴ. 389 - Վարչութեան մը քոյր մասնաճիւղերու շրջանին մէջ, հայ թէ օտար որեւէ միութեան կամ խումբի հետ ձեռնարկներ կրնայ կազմակերպել, քոյր Մասնաճիւղի Վարչութեան հաւանութեամբ:

ՅՕԴ. 390 - Շրջանի սահմաններէն դուրս Վարչութեան մը կազմակերպած որեւէ աշխատանք պէտք է ունենայ Շրջանային Վարչութեան հաւանութիւնը: Նմանապէս, Վարչութիւն մը պէտք է ստանայ Շրջանային Վարչութեան հաւանութիւնը այլ շրջաններէ ուր անհատ կամ խումբ հրաւիրելէ առաջ:

ՅՕԴ. 391 - Վարչութիւն մը Հ.Մ.Ը.Մ.ի անունով յուշանուէրներ կրնայ տալ ոչ Հ.Մ.Ը.Մ.ականներու, Շրջանային Վարչութեան վաւերացումէն ետք միայն:

## ՄԱՍՆԱՃԻՂԻ ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ԵՒ ԱՐԽԻՒԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

ՅՕԴ. 392 – Մասնաճիղի Հաշուեքննիչ Ցանձնախումբի պարտականությունն է՝

- Ա. Առնուագն վեց ամիսը անգամ մը քննել Մասնաճիղի բոլոր հաշիւները:
- Բ. Հաշուեքննութեան բովէն անցած հաշուեկշիռները նստաշրջանի ընթացքին յանձնել Մասնաճիղի Վարչութեան, իսկ նստաշրջանի աւարտին ներկայացնել Մասնաճիղի Անդամական Ընդհանուր Ժողովին:
- Գ. Վարչութեան օգտագործած հաշուապահական ձեւերու մասին իր ունեցած դիտողութիւնները եւ ուղղիչ առաջարկները նստաշրջանի ընթացքին յայտնել Վարչութեան, իսկ նստաշրջանի աւարտին, յիշեալ առաջարկները չգործադրուած ըլլալու պարագային, ներկայացնել զանոնք Մասնաճիղի Անդամական Ընդհանուր Ժողովին:

ՅՕԴ. 393- Հաշուեքննիչ յանձնախումբի ներկայացնելիք հաշուեկշիռները պէտք է պարունակեն նախորդ Անդամական Ընդհանուր Ժողովէն վաւերացուած նախահաշիւի եւ անցնող տարեշրջանի նիւթական իրական պատկերի համեմատութիւնը:

ՅՕԴ. 394-Հաշուեքննիչ յանձնախումբը պէտք է ստուգէ նաեւ Մասնաճիղի ունեցած գոյքերը, ստացուածքը եւ պարտքերը:

ՅՕԴ. 395 -Մասնաճիղի Վարչութիւնը կրնայ որեւէ ժամանակ հաշուեքննիչ յանձնախումբը հրաւիրել հաշուեքննութիւն կատարելու համար:

ՅՕԴ. 396 – Մասնաճիղի արխիւային յանձնախումբի պարտականությունն է՝ Մասնաճիղի Անդամական Ընդհանուր Ժողովէն մէկ ամիս առաջ քննել Վարչութեան արխիւները, պատրաստել համապատասխան տեղեկագիր եւ ներկայացնել Մասնաճիղի Անդամական Ընդհանուր Ժողովին:

## ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՅՕԴ. 397 «63»-** Իրաքանչիւր Մեկուսի Շրջան կ'ունենայ իր Մեկուսի Շրջանի Վարչութիւնը բաղկացած 5, 7, 9 կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Մեկուսի շրջանի Անդամական Ժողովին կողմէ, մէկ կամ երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 398 «64»-** Մեկուսի Շրջանի Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ երկու տարուան Հ.Ս.Ը.Ս.ական մը, որ նախապէս նուազագոյնը մէկ տարի մաս կազմած է մասնաճիւղի խորհուրդի մը կամ յանձնախումբի մը:

**ՅՕԴ. 399 «65»-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՕԴ. 400 «66»-** Մեկուսի Շրջանի Վարչութեան կազմը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 401 «67»-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կը վարէ իր շրջանի միութենական գործերը՝ ընդհանուր եւ ներքին կանոնագրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական Ընդհանուր ու Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովներու որոշումներու սահմանին մէջ:

**ՅՕԴ. 402 «68»-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ յանձնախումբերու եւ ժողովներու գործունէութեանց:

**ՅՕԴ. 403 «69»-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունէութեան տեղեկագիրին հետ կը ներկայացնէ Մեկուսի Շրջանի Անդամական Ժողովին, որուն պատասխանատու է հաւաքաբար:

**ՅՕԴ. 404 «70»-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը դրկէ՝

Ա. Վարչական ժողովներու նիստերու եւ Անդամական Ժողովին աստենագրութիւնները:

Բ. Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունէութեան տեղեկագիր:

**ՅՕԴ. 405 «71»-** Մեկուսի Շրջանի Վարչութիւնը կ'ունենայ իր կնիքը, մակագիր թուղթն ու պահարանը:



**ՅՕԴ. 406 «72»-** Մեկուսի Շրջանի Վարչութեան անդամ մը պատժելի արարքի մը համար, վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տնօրինում:

**ՅՕԴ. 407 «73»-** Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւնները կրնան մարզական եւ սկաուտական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՕԴ. 408 «74»-** Շրջանային եւ Մեկուսի Շրջանի վարչութիւնները պարտաւոր են Կեդրոնական Վարչութեան վճարել Պատգամաւորական ընդհանուր Ժողովին կողմէ որոշուած ցենզը, ամէն տարի կանոնաւորաբար:

## **ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՅՕԴ. 409 «75»-** Իւրաքանչիւր շրջան կ'ունենայ իր Շրջանային Վարչութիւնը, բաղկացած 5, 7, 9, կամ 11 անդամներէ: Կ'ընտրուի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ, երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 410 «76»-** Շրջանային Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ հինգ տարուան Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ նախապէս նուազագոյնը երկու տարի մաս կազմած է Մասնաճիւղի մը Վարչութեան, Շրջանային խորհուրդներու կամ յանձնախումբերու:

**Ծանօթ. Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն ներս, Շրջանային Վարչութեան անդամ ըլլալու պայմաններէն է նաեւ նուազագոյնը 25 տարիքը բոլորած ըլլայ:**

**ՅՕԴ. 411 «77»-** Որեւէ պատճառով դադրող վարչական անդամ մը փոխարինելու համար, Շրջանային Վարչութիւնը կ'ամբողջացնէ իր կազմը՝ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՕԴ. 412 «78»-** Շրջանային Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար. ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

**ՅՕԴ. 413 «76» -** Շրջանային Վարչութեան կազմը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 414 «80»-** Շրջանային Վարչութիւնը կը վարէ շրջանի մը միութենական գործերը՝ Ընդհանուր եւ Ներքին Կանոնագիրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական Ընդհանուր ու Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու որոշումներու սահմանին մէջ: Հետամուտ կ'ըլլայ կազմելու նոր մասնաճիւղեր:

**ՅՕԴ. 415 - Շրջանային Վարչութիւնը կը նշանակէ՝**

**Ա. Շրջանային Սկաուտական Խորհուրդ**

**Բ. Շրջանային Ընդհանուր Խմբապետ/Խմբապետուհի**

**Գ. Շրջանային Խմբապետ եւ Խմբապետուհի**

**Դ. Շրջանային Մարզական Խորհուրդ**

**Ե. Անհրաժեշտ այլ Շրջանային յանձնախումբեր**

**Զ. Նշանակումները կատարուին առաւելագոյնը չորս ամիս Շրջանային Վարչութեան ընտրութենէն ետք:**

**ՅՕԴ. 416 «81»-** Շրջանային Վարչութիւնը կը հսկէ իրեն ենթակայ մարմին-Ներու, յանձնախումբերու եւ ժողովներու գործունէութեանց:

**ՅՕԴ. 417 «82»-** Շրջանային Վարչութիւնը պարտի ունենալ ժողովական կանոնաւոր արձանագրութիւն, նամակագրութեան եւ շրջաբերականներու յատուկ թղթածրար, հաշուական տոմար, զորս իր գործունէութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին, որուն պատասխանատու է հաւաքաբար:

**ՅՕԴ. 418 «83»-** Շրջանային Վարչութիւնը կանոնաւոր կերպով Կեդրոնական Վարչութեան կը դրկէ՝

**Ա. Վարչութեան ժողովներու նիստերու եւ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին ատենագրութիւնները:**

**Բ. Մասնաճիւղերուն յղած շրջաբերականները:**

**Գ. Իր շրջանի աւարտին նիւթաբարոյական գործունէութեան եւ շրջանի մասին տեղեկագիր:**

**ՅՕԴ. 419 «84»-** Շրջանային Վարչութիւնը իրաւասու է իր անունով լիազօր ներկայացուցիչներ ուղարկելու իր մասնաճիւղերու վարչութեանց նիւթական եւ բարոյական գործունէութիւնը քննելու, ներքին հարցերը լուծելու եւ ուղղութիւն տալու համար:

**ՅՕԴ. 420 «85»-** Շրջանային Վարչութիւնը իրաւասու է Մասնաճիւղի վարչական կազմ մը լուծելու նիւթական սայթաքումներու, անգործունէութեան, որոշում-հրահանգներու հանդէպ անտարբերութեան եւ մասնաճիւղի ներքին կեանքին մէջ ստեղծուած դժգոհութեանց պատճառով:

Նման պարագաներու, Շրջանային Վարչութիւնը անմիջապէս կը նշանակէ վարչական կազմ, որուն առաջնահերթ պարտականութիւնը կ'ըլլայ առաւելագոյնը մինչեւ երեք ամիս յառաջացնել մասնաճիւղի Անդամական Ընդհանուր Ժողով:

**ՅՕԴ. 421 «86»-** Բացառիկ պարագաներու՝ Շրջանային Վարչութիւնը իրաւասու է նշանակովի վարչութիւն յառաջացնել Մասնաճիւղի մը մէջ:

**ՅՕԴ. 422 «87»-** Շրջանային Վարչութիւնը կրնայ ռեւէ անդամ մը նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մէջ՝ ենթակային պատկանած մասնաճիւղի վարչութեան հետ խորհրդակցաբար:

**ՅՕԴ. 423 -** Շրջանային Վարչութիւնը իր ենթայանձնախումբերուն մէջ աշխատող անդամները նշանակելէ առաջ ստանայ պատկան Մասնաճիւղի համաձայնութիւնը:

**ՅՕԴ. 424 «88»-** Շրջանային Վարչութիւն մը կրնայ գործավար ունենալ, Շրջանային Ներկայացուցչական Ժողովի որոշումով:

**ՅՕԴ. 425 «89»-** Միայն Շրջանային Վարչութիւնը կրնայ իր շրջանին մէջ միջ-մասնաճիւղային ձեռնարկներ, հանդիպումներ եւ սկաուտական բանակումներ կազմակերպել:

Պարագաներու բերումով այդ պարտականութիւնը կրնայ յանձնել մասնաճիւղի մը:

**ՅՕԴ. 426 «90»-** Շրջանային եւ Մեկուսի Շրջանի Վարչութիւնները կրնան մարզական եւ սկաուտական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել՝ Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ:

**ՅՕԴ. 427 «91»-** Շրջանային եւ Մեկուսի Շրջանի Վարչութիւնները պարտաւոր են Կեդրոնական Վարչութեան վճարել՝ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին կողմէ որոշուած ցենզը, ամէն տարի կանոնաւորաբար:

**ՅՕԴ. 428 «92»-** Շրջանային Վարչութեան անդամ մը, պատժելի արարքի մը համար, Շրջանային Վարչութեան մնացեալ կազմի երկու երրորդին որոշումով կը մեկուսացուի եւ իր թղթածրարը անմիջապէս կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան՝ առ ի տնօրինում:

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՇՈՒԵՔՆՆԻՉ ԵՒ ԱՐԽԻՒԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

**ՅՕԴ. 429** – Շրջանային Հաշուեքննիչ յանձնախումբի պարտականությունն է՝

- Ա. Առնուազն տարին անգամ մը քննել Շրջանային Վարչութեան հաշիւները:
- Բ. Հաշուեքննութեան բովէն անցած հաշուեկշիռը ներկայացնել Շրջանային Վարչութեան, իսկ նստաշրջանի աւարտին Շրջանային Ներկայացուցչական Ժողովին:
- Գ. Շրջանային Վարչութեան օգտագործած հաշուապահական ձեւերու մասին իր ունեցած դիտողութիւնները եւ ուղղիչ առաջարկները նստաշրջանի ընթացքին յայտնել Շրջանային Վարչութեան, իսկ նստաշրջանի աւարտին, յիշեալ առաջարկները չգործադրուած ըլլալու պարագային, ներկայացնել զանոնք Շրջանային Ներկայացուցչական Ժողովին, առ ի վաւերացում:

**ՅՕԴ. 430** – Շրջանային Հաշուեքննիչ յանձնախումբը պէտք է ստուգէ նաեւ Շրջանային Վարչութեան գոյքերը, ստացուածքները եւ պարտքերը:

**ՅՕԴ. 431**– Շրջանային Արխիւային Յանձնախումբի պարտականությունն է՝ Շրջանային Ներկայացուցչական Ժողովէն մէկ ամիս առաջ քննել Շրջանային Վարչութեան արխիւները, պատրաստել համապատասխան տեղեկագիր եւ ներկայացնել Շրջանային Ներկայացուցչական Ժողովին:

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՅՕԴ. 432 «93»** - Հ.Մ.Ը.Մ.ի գործադիր գերագոյն մարմինն է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը:

**ՅՕԴ. 433 «94»** - Կեդրոնական Վարչութիւնը կ'ընտրուի Պատգամատրական Ընդհանուր Ժողովին կողմէ, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ: Կեդրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 7, 9, 11 կան 13 անդամներէ եւ կ'ընտրուի չորս տարուան համար:

**ՅՕԴ. 434 «95»** - Կեդրոնական Վարչութիւնը իր կազմէն որեւէ պատճառով պակասող անդամին տեղ իր կազմը կ'ամբողջացնէ:

**ՅՕԴ. 435 «96»** - Կեդրոնական Վարչութեան անդամ մը կրնայ ընտրուիլ երկու յաջորդական շրջաններու համար, ապա մէկ շրջան դադարէ մը վերջ միայն, կրնայ վերընտրուիլ նոյն հերթականութեամբ:

**ՅՕԴ. 436 «79»** - Կեդրոնական Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ առնուազն 10 տարուան Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ շրջանի մը Շրջանային Վարչութեան անդամ կամ Շրջանային Վարչութեան մակարդակի յանձնախումբի մէջ եղած է կամ վարած՝ համապատասխան պաշտօն:

**ՅՕԴ. 437 «98»** - Կեդրոնական Վարչութեան կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիրի, կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն մեկնաբանութեան իրաւունքը:

**ՅՕԴ. 438 «99»** - Կեդրոնական Վարչութիւնը կը գործադրէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումները եւ կը հսկէ անոնց գործադրութեան՝ շրջաններէն ներս:

**ՅՕԴ. 439 «100»** - Կեդրոնական Վարչութիւնը կը հսկէ, որ Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու որոշումները եւ Շրջանային Վարչութեանց գործունէութիւնը չհակասեն **Միութեան Ծրագիր-Կանոնագիրին** եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումներուն:

**ՅՕԴ. 440 «101»** - Շրջաններու պահանջով, կամ անհրաժեշտ պարագային իր որոշումով, Կեդրոնական Վարչութիւնը միութենական գործերուն համար կրնայ ներկայացուցիչներ դրկել շրջանները, որոշ պարտականութեամբ:

**ՅՕԴ. 441 «102»** - Կեդրոնական Վարչութիւնը պարտաւոր է պահել ատենագրութեան, նամակագրութեան, շրջաբերականներու եւ հաշուական համապատասխան թղթածրարներ, զորս իր գործունէութեան տեղեկագրին հետ կը ներկայացնէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին եւ որուն պատասխանատու է հաւաքաբար:

**ՅՕԴ. 442 «103»** - Միայն Կեդրոնական Վարչութիւնը կրնայ կազմակերպել համա-Հ.Մ.Ը.Մ.ական հանդիպումներ, սկաուտական բանակումներ եւ մարզական խաղեր, հաւաքատեղիի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Շրջանի Վարչութեան գործակցութեամբ:

**ՅՕԴ. 443 «104»** - Կեդրոնական Վարչութիւնը կրնայ ռեւէ անդամ մը նշանակել իրեն ենթակայ յանձնախումբի մը մէջ՝ ենթակային պատկանած Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան հետ խորհրդակցաբար:

**ՅՕԴ. 444** «105» - Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեակի աւարտին կը հրաւիրէ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, որուն գումարումի թուականէն վեց ամիս առաջ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն կը դրկէ Ժողովի օրակարգը:

**ՅՕԴ. 445** «106» - Բացառիկ պարագաներու՝ Կեդրոնական Վարչութիւնը իրաւասու է լուծելու Շրջանի Վարչական կազմը եւ անոր տեղ նորը նշանակելու:

Նշանակուած Վարչութիւնը մինչեւ վեց ամիս պարտաւոր է հրաւիրելու Շրջանային Ներկայացուցչական կամ Անդամական Ընդհանուր Ժողով, ընտրելու համար նոր Վարչութիւն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

**ՅՕԴ. 446** «107» - Շրջաններ եւ Մեկուսի Շրջաններ կ'ունենան իրենց ներքին կանոնագիրը, համաձայն շրջանի պայմաններուն, հաստատուած համապատասխան ժողովներու ընթացքին, եւ վաւերացուած Կեդրոնական Վարչութեան կողմէ:

**ՅՕԴ. 447** «108» - Հ.Մ.Ը.Մ.ը ունի իր «**Ծառայութեան**» եւ «**Արժանեաց**» շքանշաններ, ինչպէս նաեւ՝ «**Արտակարգ**» պատուանշանը, որոնք ունին իրենց յատուկ կանոնագրութիւնները:

**ՅՕԴ. 448** «109» - Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները իրենց մարզական բոլոր տարագներուն վրայ պարտին կրել Հ.Մ.Ը.Մ.ի **Վահանը**՝ զետեղուած ձախ կուրծքին վրայ:

**ՅՕԴ. 449** «110»- Վարչական մը, չի կրնար նիւթական վարձատրութիւն ստանալ, այլապէս կը դադրի իր հանգամանքէն:

**ՅՕԴ. 450** «111» - Այս կանոնագրութեան եւ կազմակերպական կանոններու մեկնաբանութեան իրաւունքը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

**ՅՕԴ. 451** «112» - Շրջաններու Ներքին Կանոնագրութիւնը մեկնաբանելու իրաւունքը կը պատկանի Շրջանային Վարչութեան:

**ՅՕԴ. 452** «113» - Այս կանոնագրութեան վերաբերեալ որեւէ փոփոխութիւն կատարելու իրաւունքը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

## ԸՆՏՐԱԿԱՆ

**ՅՕԴ. 453 «114»** - Տասնըութ տարիքը լրացուցած եւ առնուազն վեց ամիս Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն անդամակցած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները իրաւունք ունին քուէարկելու:

**ՅՕԴ. 454 «115»** - Ընտրութիւնները կը կատարուին գաղտնի քուէարկութեամբ: Քուէներու ընդհանուր թիւէն կը զեղչուին ճերմակ քուէները եւ մնացեալին կէսէն աւելին ստացողը ընտրուած կը համարուի, պայմանաւ որ ճերմակ քուէներուն թիւը ընտրելու իրաւունք ունեցողներու թիւի կէսէն աւելի չըլլայ:

## ՆԻԻԹԱԿԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ

**ՅՕԴ. 455 «116»** - Միութեան հասոյթի միջոցներն են. անդամավճարներ, մուտքի տուրքեր, միութեանական հանդէսներէ եւ մրցումներէ գոյացած գումարներ, նուէրներ, հանգանակութիւններ, կտակներ եւ մնայուն հասոյթի աղբիւրներ:

**ՅՕԴ. 456 «117»** - Վարչութեան մը արտօնուած չէ Միութեան գանձը առեւտրական շահարկումի ենթարկել: Բացառութիւն կարելի է կատարել գերադաս վարչութեան եւ գերադաս ժողովի հաւանութեամբ:

**ՅՕԴ. 457 «118»** - Մասնաճիւղ մը քոյր մասնաճիւղի մը սահմանին մէջ որեւէ հասութաբեր ձեռնարկի համար պարտաւոր է Շրջանային Վարչութեան եւ տեղական վարչութեան հաւանութիւնը առնել:

**ՅՕԴ. 458 «119»** - Վարչութիւնները Միութենէն դուրս որեւէ ձեռնարկի չեն կրնար յատկացումներ ընել իրենց գանձէն: Բացառիկ պարագաներու գերադաս մարմինի հաւանութիւնը ստանալ անհրաժեշտ է:

**ՅՕԴ. 459 «120»** - Վարչութիւնները չեն կրնար իրենց գանձէն որեւէ փոխատուութիւն ընել ուրիշ անհատի (անդամ կամ ոչ), ինչպէս նաեւ որեւէ կազմակերպութեան: Այլ տեսակի փոխատուութիւններ կը կարօտին գերադաս վարչութիւններու հաւանութեան:

**ՅՕԴ. 460 «121»** - Վարչութիւնները փոխառութիւն կրնան ընել եւ կամ կալուածներ գրաւի տակ կրնան դնել միայն գերադաս մարմինի հաւանութեամբ:

**ՅՕԴ. 461** - Արեւմտեան Միացեալ Նահանքներու Հ.Մ.Ը.Մ.ը ՈՉ ՇԱՀԱԲԵ-  
ՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է:

Արդ, կրնայ իր անունով նիւթական գործառնութիւններ ունենալ, Շրջանային  
Վարչութեան գիտակցութեամբ եւ հաւանութեամբ:

## ՀԱՇՈՒԱԿԱՆ

**ՅՕԴ. 462** «122» - Ամէն մարմին պարտաւոր է ստացած գումարին համար  
տալ համապատասխան կնքուած ընկալագիր՝ գանձապահին ստորագրութեամբ:

**ՅՕԴ. 463** «123» - Բոլոր վարչութիւնները պարտաւոր են իրենց հաշիւները  
պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահութեամբ:

**ԾԱՆՕԹ .** – Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանէն  
ներս, Մասնաճիւղերու Վարչութիւնները իրենց տարեկան  
նիւթական գործառնութեան հաշուետոյութիւնը կը  
կատարեն պետական մարմին - ԱՅ.ԱՐ.ԷՍ. ԻՆԹԸՐՆԸԼ  
ՐԷՎԸՆԵՈՒ ՍԸՐՎԻՍ – Շրջանային Վարչութեան միջոցաւ:

**ՅՕԴ. 464** «124» - Արգիլուած է որեւէ հիմնադրամ գործածել տարբեր նպատակի:

## ՄԱՐԶԱԿԱՆ

**ՅՕԴ. 465** «125» - Մարզական խաղերը կ'ունենան իրենց յատուկ Ներքին  
Կանոնագրութիւնը, որ պէտք է վաւերացուած ըլլայ համապատասխան վարչութեան  
կողմէ:

**ՅՕԴ. 466** – Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Մարզական ներքին  
կանոնագիրը մաս կը կազմէ Շրջանի ներքին կանոնագիրին:

## ԳՈՅՔԵՐ ԵՒ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ

**ՅՕԴ. 467** «126» - Իւրաքանչիւր Վարչութիւն պարտաւոր է ունենալ գոյքերու կա-  
նոնաւոր տոմար, ուր թուագրեալ նշանակուած պէտք է ըլլան մասնաճիւղի գոյքերը,  
համապատասխան մանրամասնութիւններով:



**ՅՕԴ. 468 «127»** - Իւրաքանչիւր շրջանի անշարժ կալուածները (դաշտ, մարգարան, ակումբ եւ այլն), Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ, պետութեան մօտ կ'արձանագրուին շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի անունով: Բացառիկ պարագաներու կը յանձնուին Կեդրոնական Վարչութեան կարգադրութեան:

**ՅՕԴ. 469 «128»** - Կալուածները կրնան ծախուիլ համապատասխան ժողովներու որոշումով եւ գերադաս Վարչութիւններու վաւերացումով:

**ՅՕԴ. 470 «129»** - Մասնաճիւղ մը լուծուելու պարագային՝ անշարժ եւ շարժուն կալուածները եւ իրաւունքները կը փոխանցուին համապատասխան գերադաս Վարչութեան:

## ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

**ՅՕԴ. 471 «130»** - Հակակարգապահական արարքի մէջ կը նկատուի անդամ մը երբ՝

Ա. Կազմակերպական կանոններու եւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներու որոշումներուն դէմ կը մեղանչէ:

Բ. Շրջանային Վարչութեան կամ Մասնաճիւղի Վարչութեան որոշումներուն չ'ենթարկուիր:

Գ. Անդամատուրք չի վճարեր:

Դ. Ժողովներէ կը բացակայի:

Ե. Մարմիններու պաշտօնավարութեան շրջանին, անոնց դէմ պայքար կը մղէ:

Զ. Հարցի մը, հակականոնագրային ձեւով ընթացք տալու համար, հանրագրութիւններ կը կազմէ:

Է. Գոյք կան դրամ կ'իրացնէ:

Ծանօթ - Քննադատութիւնները թոյլատրելի են միայն իրաւասու ժողովներու մէջ:

**ՅՕԴ. 472 «131»** - Միութեան պատիժներն են՝

Ա. Նկատողութիւն, դիտողութիւն

Բ. Յանդիմանութիւն

Գ. Քուէարկելու իրաւունքէ զրկում

Դ. Ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէ զրկում

Ե. Կախակայում

Զ. Հեռացում

Է. Արտաքսում

**ՅՕԴ. 473 «132»** - Կարգապահական տեսակետով ամեն անդամ պատասխանատու է այն Վարչութեան, որուն իրաւասութեանց դէմ յանցանք գործած է:

**ՅՕԴ. 474 «133»** - Մարմիններն ու ժողովները իրենց ենթակայ անդամներուն մասին կարգապահական պատիժներ տնօրինելու պարագային, պարտաւոր են պաշտպանուելու հնարաւորութիւն տալ ենթակային:

**ՅՕԴ. 475 «134»** - Պատժական ամեն որոշում կը տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 476 «135»** - Մարմիններու եւ ժողովներու պատժական որոշումները վերջնական են, եթէ բողոք չկայ անոնց դէմ: Բողոքել կարելի է անմիջականօրէն գերադաս Վարչութեան: Բողոքառու ժողովներու եւ մարմիններու որոշումները վերջնական են:

#### **ԾԱՆՕԹ.-**

Ա. Դատավճիռի մը դէմ բողոքողը կը զրկուի իր դատը գերադաս ժողովին եւ կամ մարմինին ներկայացնելու իրաւունքէն, եթէ իր բողոքը հրապարակուած է մամուլի միջոցով կամ հանրային բեմերէ:

Բ. Բողոքը գրաւոր կը ներկայացուի պատիժ որոշող մարմինին կամ ժողովին միջոցով:

Գ. Պատժական տնօրինումներու բեկանումի պարագային, որոշումը պէտք է տրուի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

**ՅՕԴ. 477 «136»** - կարգապահական պատիժներու դէմ բողոքել կարելի է մինչեւ երկու ամիս, հաշուելով որոշումը հաղորդուած թուականէն: Բողոքառու մարմինը կամ ժողովը հարցը կրնայ քննել ինք կամ քննութիւնը յանձնել յատուկ դատական ատեանի:

**ՅՕԴ. 478 «137»** - Հ.Մ.Ը.Մ.էն հեռացման որոշում կը տրուի Շրջանային Վարչութեան կողմէ, եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

**ՅՕԴ. 479 «138»** - Հ.Մ.Ը.Մ.էն արտաքսման որոշում կը տրուի եւ շարքերուն կը փոխանցուի Կեդրոնական Վարչութեան կողմէ, միութենական համապատասխան կարգով:

**ՅՕԴ. 480 «139»** - Ժողովներէ յաճախ բացակայող անդամ մը կը ստանայ նկատողութիւն, իսկ կրկնութեանց պարագային՝ յանդիմանութիւն:

**ՅՕԴ. 481 «140»** - Մէկ տարի անդամատուրք չվճարող անդամ մը կը գրկուի ընտրելու եւ ընտրուելու իրաւունքէն: Յաջորդական երեք տարիներ անդամատուրք չվճարող անդամ մը դադրած կը նկատուի Միութեան շարքերէն:

**ՅՕԴ. 482 «141»** - Կազմակերպական կանոններու դէմ մեղանշողները, վարչական կարգադրութեանց դէմ անսաստողները, հակաօրինական կերպով քննադատողները, հանրագրութիւն կազմողները՝ մարմինին կամ ժողովներու կողմէ կը կախակայուին:

**ԾԱՆՕԹ .-**

Ա. Կախակայուած անդամ մը ժամանակաւոր կերպով կը դադրի Միութեան անդամ ըլլալէ, չի կրնար մաս կազմել մարմինի մը եւ մասնակցիլ Ընդհանուր Ժողովներու:

Բ. Կախակայումը առաւելագոյն մէկ տարուան շրջանի համար կ'ըլլայ:

Գ. Կախակայման շրջանը լրանալուն՝ ենթական կը վերստանայ Միութեան անդամի իր բոլոր իրաւունքները:

**ՅՕԴ. 483 «142»** - Կախակայուած անդամներ գերծ չեն կացուցուիր իրենց նիւթական պարտաւորութիւններէն:

**ՅՕԴ. 484 «143»** - Միութեան գաղափարական ուղղութեան դէմ գործողները, կարգապահական յանցանքներու համար յաճախակի պատիժ ստացողները, Միութեան գոյքը եւ դրամը իւրացնողները Միութենէն կը հեռացուին, իսկ ծայրայեղ պարագաներու կ'արտաքսուին:

**ԾԱՆՕԹ.-** Հեռացուած անդամ մը հեռացման թուականէն երկու տարի յետոյ կրնայ գրաւոր դիմում կատարել զինք հեռացնող մարմինին կամ ժողովին: Վերընդունման իրաւունքը կը պատկանի հեռացման որոշումը տնօրինող մարմինին կամ ժողովին:

**ՕՐԷՆՔՆԵՐ**  
**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ**  
**ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ**  
**ԵՒ**  
**ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒ**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ**

ՅՕԴ. 485 –

- Ա. Ժողովի ընտրած Դիւանը կը վարէ ժողովը, երբ օրակարգի վրայ են Վարչութեան գործունէութեան քննութիւնը, նոր Վարչութեան ընտրութիւնը կամ Շրջանային Ժողովի ներկայացուցիչներու ընտրութիւնը:
- Բ. Վարչութեան Դիւանը կը վարէ ժողովը, երբ առաջին բաժինին մէջ յիշուած հարցերը օրակարգի վրայ չեն:
- Գ. Բաժանմունքի Ընդհանուր Ժողովը կը վարէ բաժանմունքի Վարիչ Մարմինի կամ Վարչութեան ներկայացուցիչը:

Ծանօթ. Դիւանին մաս չեն կրնար կազմել նոյն ժողովին հաշուետու մարմիններու անդամները:

ՅՕԴ. 486- Դիւանը կանոնաւոր կերպով կը կազմէ Ժողովի նիստերու ատենագրութիւնները, կցուած ունենալով բոլոր փաստաթուղթերը, եւ անոնց բնագիրը կը փոխանցէ ընտրուած Մարմինին, իսկ պատճէնը՝ վերին Մարմինին:

ՅՕԴ. 487 – Ժողովի աւարտէն մինչեւ 10 օր, դիւանը կը հրաւիրէ նոյն ժողովէն ընտրուած մարմիններու անդրանիկ նիստը, ընտրելու անոնց դիւանները եւ անոնց կը յանձնէ ժողովին կողմէ իրենց համար ճշդուած պարտականութիւններու ցանկը, իրաւաստեանց սահմանները, բոլոր փաստաթուղթերը եւ կը հսկէ, որ կատարուին հարկ եղած փոխանցումները նախորդ եւ նորընտիր Վարչութեանց միջեւ:

ՅՕԴ. 488 - Եթէ Դիւանը թերանայ ընտրուած մարմինները ճշդուած ժամանակամիջոցին ժողովի հրաւիրելու, ընտրուած ոեւէ անդամ պէտք է դիմէ իրմէ վերին Մարմինին:

ՅՕԴ. 489- Անդամական Ընդհանուր Ժողովի ընթացքին Վարչութեան հրաժարումէն ետք, նոյն օրը նոր Վարչութիւն չընտրուելու պարագային, հարցը կը փոխանցուի Շրջանային Վարչութեան, որ Անդամական Ընդհանուր Ժողովի Դիւանին զեկուցումը լսելէ ետք կը տնօրինէ անհրաժեշտը:

## ԿԱՌՈՅՑ

ՅՕԴ. 490 – Հ.Ս.Ը.Ս.ի Արեւտմեան Միացեալ Նահանգներու Շրջանի ամենակարեւոր մասնիկը խումբն է:

Ա. Սկաուտական միանման մի քանի խումբերու համատեղումը կը կազմէ միաւոր, իսկ սկաուտական միաւորներու համատեղումը կը կազմէ սկաուտական բաժանմունքը:

Բ. Մարզական միեւնոյն մարզախաղը գործադրող խումբերու համատեղումը կը կազմէ մարզաճիւղ, իսկ մարզաճիւղերու համատեղումը կը կազմէ մարզական բաժանմունքը:

Գ. Սկաուտական եւ մարզական աշխատանքներէն դուրս, միեւնոյն աշխատանքը տանող անդամներու համախմբումով կը կազմուի տուեալ խումբը, իսկ խումբերու համախմբումը կը կազմէ նոյն բաժանմունքը:

Դ. Միեւնոյն քաղաքի բաժանմունքներու համախմբումը կը կազմէ տուեալ քաղաքի Մասնաճիւղը, իսկ միեւնոյն շրջանի մասնաճիւղերու համախմբումը կը կազմէ Շրջանը:

ՅՕԴ. 491– Իւրաքանչիւր Հ.Ս.Ը.Ս.ական մաս կը կազմէ առնուազն մէկ խումբի:

ՅՕԴ. 492– Վարչութիւնները եւ Վարիչ Մարմինները կ'ունենան ատենապետ, փոխ-ատենապետ, գանձապահ, հաշուապահ եւ գոյքապահ:

## ՎԵՐՉ